Այսպիսով, Դատարանը, հիմք ընդունելով սույն գործի նկատմամբ կիրառելի վերը նշված նորմերի պահանջները, գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, գտնում է, որ տվյալ դեպքում առկա է հայցվորի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը, ինչն էլ հիմք է հանդիսացել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով մասնակցին՝ հայցվորին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Նշված փաստերի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջն անհիմն է և ենթակա մերժման:

<u>Դատական ծախսերը.</u>

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4 ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

«ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերություն հայցն ընդդեմ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու վերաբերյալ 03.02.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____ 2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**